



2020թ. դեկտեմբերին սպասվող կարևոր փոփոխություններ Medi-Cal-ի պայմաններում՝ 65 տարեկան կամ բարձր տարիքի և հաշմանդամություն ունեցող անձանց համար

Սկսած 2020թ. դեկտեմբերի 1-ից՝ «Aged & Disabled» Medi-Cal ծրագրում ընդգրկված շահառուների համար գործում է Medi-Cal-ի իրավունակության ավելի բարձր եկամտի սահմանաչափ: Դա նշանակում է, որ ավելի մեծ գումար վաստակելու դեպքում կարող եք ստանալ անվճար Medi-Cal կամ պահպանել այն: Ստորև ներկայացված են եկամտի հին և նոր սահմանաչափերը.

Տնային տնտեսույթ	Ամսական եկամտի նախկին սահմանաչափ	2020թ. դեկտեմբերի 1-ից գործող	Տարբերություն
1	\$1,294	\$1,468	\$174
2	\$1,747	\$1,983	\$236

Ի՞նչ ազդեցություն է ունենալու սա ինձ վրա

Եթե ձեր ծախսային մասնաբաժինը կազմում է առավելագույնը \$848 (կամ առավելագույնը \$1030 գույգերի համար), դեկտեմբերին դուք կհամապատասխանեք Medi-Cal-ի իրավունակության պահանջներին: Դուք ավտոմատ կերպով կանցնեք անվճար Medi-Cal-ի, իսկ եթե դա տեղի չունենա, դիմեք ձեր վարչաշրջանին կամ ստորև նշված հեռախոսահամարով կապվեք Health Consumer Center-ի ձեր մասնաճյուղի հետ:

Ամսական եկամտի նոր սահմանաչափը պարզապես բազային եկամուտն է: Յուրաքանչյուր ապրիլ ամսին այն թեթևակի կբարձրանա: Դուք այնուամենայնիվ կարող եք նվազեցնել եկամտի որոշ տեսակներ, ինչպես նաև, օրինակ, բժշկական ապահովագրավճարներն ու ձեր աշխատանքային եկամտի մի մասը:

Կանոնների նոր պարզեցում.

Սկսած կրկին դեկտեմբեր ամսից, եթե անցնեք անվճար Medi-Cal-ին և դուրս գաք նրանից՝ կախված այն բանից, թե ով է վճարում ձեր Medicare-ի Մաս Բ-ի ապահովագրավճարը՝ նահանգը, թե դուք, դուք կպահպանեք անվճար Medi-Cal-ը: Նահանգը կհանի այս շփոթեցնող կանոնը, որով եկամտի հաշվարկն իրականացվում է այլ կերպ՝ կախված նրանից, թե ով է վճարում ապահովագրավճարը՝ դուք, թե նահանգը:

Չանգահարեք **Health Consumer Center**-ին ցանկացած ժամանակ **1-888-804-3536** հեռախոսահամարով, եթե այլ հարցեր ունեք, կամ եթե ձեզ օգնություն է հարկավոր: Կարող եք այցելել նաև՝ www.healthconsumer.org.